


ՀԱՆԴԵՍ ԹԱՏԵՐԱԿԱՆ



ԽԱՂԱՄՈԼ

ԳԻՏԵԼԻՔ

Խաղամոլ քատրերգոչքիչն յատկապէս յօրինուած են ներկայացուած է առաջին անգամ՝ Սալմաստի Սաւրս-Գիւղի մէջ հաստատուած Մխիթարեան Հայոց Դպրոցի քատերաբեմին վրայ. ոչստի ջանացոյցած է ըստ կարելոյն՝ տեղացի ունկնդրաց հասկանալի լեզուով գրուել, առանց ուղեղն յատկապէս գաւառականով մի՝ անհասկանալի լինել ընդհանուր հայաբնակ գաւառաց. յորս ներկայացուելով 'ի քատերաբեմի՝ կարող պիտի լինի անշուշտ օգտաւէտ ազդեցութիւն մ'ունենալ շատ մը գծրախտ խաղաղուներու տուած գործնական լար օրինակաց փոխարէն, որով բարեմիտ պատասնիր են երիտասարդք՝ շատ անգամ առանց իմանալոս՝ անզգալի կերպով իրենք գիրենք ամենադասն ախտաւորութեան մի կ'ենթարկեն, որոյ իրք հետեանք, մանաւանդ մեծամեծ քաղաքացի մէջ, ամենօրեայ տխուր տեսարաններ չեն պակսիր ներկայանալու մեր ալաց առջեւ:

Հ. Ա. Տէրյեան

1. Սալմաստի Սաւրս գիւղի բնակիչքն առհասարակ պառնդխտական կեանք վարելով Ռուսոյ մեծամեծ քաղաքացի մէջ, (Սալմաստի պառնդխտութեան կեդրոնում) վայրն է (Ռուսոյ քաղաքի՝ Դանի վրայ) իրենց խղիւղիկը վերադարձած ժամանակ շատ լաւ բաներու ներս՝ գծրախտաբար բերել մտուցել են նաև խաղ խաղալու ախտաւորութիւնն. զոր անհետաքննելու եղանակաւ է լսելիք, ոչ միայն քաղաքական իշխանութեան աշակերտներն շատ անգամ 'ի գործակցութիւն կ'ենք է Թատրերգոչքիւն շարադրողն, այլ նաև Թատրերի ասպարէզն չէ Թողել է նեղաց՝ իր հզանց արգելաւոր ելք մը տուել համար:

ԱՆՁԻՆՔ

Հրանդ, իշխան, հայր Գարեգին. Գարեգին, խաղամոլ, երէց որդի Հրանդի. Սմբատ, կրտսեր որդի Հրանդի. Միհրանիկ, վեցամեայ երեխայ Գարեգինի, իսկ վերջին Հանդիսի մէջ՝ մետաւանամայ.

Թարօ, ծառայ Հրանդի և Գարեգինի. Զնոշտ Պապա, վաղիստու Հրեայ. Սեպուհ, խաղակից Գարեգինի և մտերիմ Սմբատի.

Ներսէս, Աղոտ, Տիրան, Հրահատ, խաղակից Գարեգինի.

Երկու Ռատիկանապետք և երկու գիւնտորք ոտականութեան.

Երաժիշտ մի, Մուրացիան մի և մանուկ.

Բաւնուապան մի, նոյն ընդ Մուրացիանին:

Ժողովուրդ, միայն վերջին Հանդիսի մէջ:

Տեսարանն է Ռուստով քաղաքի մէջ, Դոնի վերայ:

ՀԱՆԴԵՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻՆ ԱՌԱՋԻՆ

Միհրանիկ և ապա Թարօ

(Միհրանիկի գետին նստած՝ կու լայ, կը մտնէ Թարօ և կ'ըսէ).

Թարօ. — Ի՞նչ ունիս, Միհրանիկ, ինչ...

չու կու լաս (վեր կը վերցընէ)։ Նայէ, տես, քեզի շաքար եմ բերեր...

Միհր. — Չեմ ուզեր, չեմ ուզեր (մերժելով լալազին)։

Թարո. — Ի՞նչ բան կ'ուզես, Միհրա-նիկ, ի՞նչ բերեմ քեզի...

Միհր. — Հայրիկս կ'ուզեմ, հայրիկս մեր է... երեք օր է տուն չէ եկած... զբա-րոցի տղերքը ինծի կ'ասեն թէ զուն որր ես. մօրէս որր եմ, գէթ հօրես ալ որր չեմ...

Թարո. — Գլուխին պատին տուեր են այն դպրոցի լակոտները՝ զուն մի լար, Միհրանիկ. հայրդ այս իրիկուն տուն պիտի գայ, մի լար...

Միհր. — Պիտի գայ... հապա ինչի երեք օր է որ չեկա...

Թարո. — Ինչի... (Դրածոսկ. խեղճ տը-գայ, անմեղ տղայ, եթէ զիսենայիր թէ ինչի)... Չեմ իմանար, Միհրանիկ, որ հայրդ գործ կ'ունենայ...

Միհր. — Ուրիշների հայրերն ալ գործ ունին, բայց զիշերը տուն կու գան...

Թարո. — Միհրանիկ... տես ի՞նչ է... հայեիք...

Միհր. — (Ուրախորհմամբ) Օ՛հ, տո՛ւր նայիմ, տո՛ւր (կ'առնէ և կը խաղայ)։

Թարո. — (Ասանձինք) Խեղճ տղայ, որչափ իրաւացի է ըսածը « Ուրիշներու հայրերն ալ գործ ունին, բայց իրիկունը տուն կը գառնան »... Միայն Միհրանիկի հայրն է՝ պարոն Գարեգինն է՝ որ զիշերները զար-տակ կը ձգէ իր տունը և պանդոկներու մէջ կ'անցընէ՝ ուտելով, խմելով, խաղալով, կարճ ըսեմ՝ վատնելով ցրտելով հօրը հարստու-թիւնը... Ի՞նչ ընեմ, ցաւիմ. բայց իմ ի՞նչ փայլիս ու հոգս է... ի՞նչ կ'ուզէ թող անէ... ես միայն իմ շահերուս համար է որ ձեռքի տակի իրեն ծածուկ գործերուն կը ծառայեմ և առատ վարձ կը ստանամ... բայց վայ ինծի թէ օր մը յանկարծ բանը դուրս գայ և ը-րած խարդախութիւններս յայտնուին. վայ ինծի թէ որ տէրս՝ Հրանդ իշխանն իմանայ որ ես եմ իր որդւոյն Գարեգինին չար ճամ-բաները տանողը... Օ՛, չէ, չէ, չեմ սպա-սեր որ բանն այդ կէտին հասնի. առաջաց կծիկը կը գնեմ կը փախչիմ... հիմա քանի

որ Հրանդ իշխանն այս տեղ չէ՝ վախ չկայ. մէկ էլ աչքերս չորս բացած՝ լաւ ուշ կը գնեմ չորս դիմ՝ որ ընելիքս ժամանակին գիտնամ... Է՛հ, ես ի՞նչ մեղաւոր եմ, ես իմ շահս պէտք է նայիմ՝ ուրիշ բան չէ. ես ծառայ եմ այս տան մէջ և ծառային...

ՏԵՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Մմբատ, Միհրանիկ և Թարո

Մմբատ. — (Ներս մտնելով տխրոս-բեամբ) Թարո՛ :

Թարո. — Հրամեցէք, պարոն Մմբատ :

Մմբատ. — Գարեգինը դեռ չդարձաւ :

Թարո. — Դեռ չէ, աէր. բայց ես քիչ առաջ մեր դրացիին տղէն՝ Հրահատէն լսեցի որ այս իրիկուն պիտի գայ այս տեղ :

Մմբատ. — Դուն զինքը չփնտոցեցիր այսօր, ինչպէս հրամայեցի...

Թարո. — Պարոն Մմբատ, չէ թէ միայն այսօր՝ այլ երեք օր է որ ամբողջ Ռոստովը վեր վար կը վազեմ. կասողնիցս շնաց, հօ-րէջ շնաց, փառք շնաց, ուղիցս շնաց որ ման չգամ. բարեկամաց տուն շնաց որ չհար-ցընեմ, ծանօթ մարդ՝ շնաց՝ ուսկից լուր չուզեմ, մինչև ոնգամ բազմիքները, թառ-րոնները, ցիրքը փնտոցի :

Մմբատ. — Ա՛, ուրիշ բան չըսա՞ւ քեզի Հրահատը... ո՛ր տեսեր է զինքը...

Թարո. — Ըսաւ որ այսօր մինչև կէս-աւուրը իրեն հետ մէկտեղ էր կամերլաքի կոտոր, բայց թէ անկից ո՛ր գնացեր է՝ չէր իմանար. ըսաւ որ արշեր էին բարեկամներու հետ այս իրիկուն մեր տունը պիտի գան այս տեղ...

Մմբատ. — Բարեկամներո՞ւ հետ...

Թարո. — Այնպէս լսեցի Հրահատէն... (Աս Միհրանիկ) Զգոյշ կեցիք, հայեիք կը կոտորես, Միհրանիկ...

Մմբատ. — Դուրս տար տղան, Թարո. մօրքորիս յանձնէ որ լաւ շորերը հագուե-ցրե՛ւ. —

ՏԵՍԻՆ ԵՐՐՈՐԻ

Սմբատ. — Ափսոս քեզի, Գարեգին, հազար փոստ... իրաւ է, ես քու փոքր եղբայրդ եմ և զուն իմ մէկհատիկ եղբայրս ես, և ես գրեզ պիտի սիրեմ. բայց զուն եղբորդ, հօրեզ ու մօրեզ աւելի, ո՛հ, նոսե այդ մէկհատիկ փոքրիկ զաւակէդ ալ աւելի՛ քու խաղդ ու խաղի բնկերներդ կը սիրես, թէ՛ քու և թէ՛ մեր բնատնեաց պատիւը մէկ ատակի կ'ընես. անփորձ երիտասարդ բարեկամներ գլխուդ ժողվեր ես, անոնց հետ կ'ուտես, կը խմես, կը հարբենաս, կը խաղաս... ո՛հ, անիծած խաղ, անիծած խաղ... Գրչափ առաքինի պիտի ըլլար Գարեգինը՝ թէ որ քեզինց ձեռք քաշէր. բայց անկարելի բան կ'երևնայ. ինչ որ ըսես իրեն՝ իբրեւ թէ ականջին չուրի ձայն գայ, կ'արհամարհ բարկ խրատները և կամ կը ծաղրէ, ու չըսեղու համար՝ ըսուած խօսքերուն շուտով հաւանութիւն կու տայ՝ առանց միտքը զնելու որ կատարէ... Խեղճ հայրս, քանի՛ քանի՛ անգամ խրատեց, յանդիմանեց, ստատեց, բարկացաւ, բայց զուր տեղ. Գարեգին կարծես ջիւր ըրաւ ու աւելի սկսաւ խաղալ. հայրս ալ սրտին ցաւէն ելաւ անէն ալ, քաղաքէն ալ հեռացաւ, և ահա երեք տարի է որ Բագու կը գտնուի՝ այնտեղ նստի բնկերութիւններէն մէկուն անգամ գրուած է և շատ լաւ կը շահի... Ո՛րչափ նամակներ գրեց՝ խրատելով որ հեռանայ Գարեգին իւր խաղալու շար սովորութենէն. բայց վարձեալ զո՛ւր. որ առաւ փրայ աւելի կը խաղայ, ունեցած հարստութիւններս կը վատնէ կը ցրուէ հազարներով... Խեղճ հարստ, խեղճ Անուշիկ, քանի՛ քանի՛ անգամ խրատեց, աղաչեց, լացաւ՝ որ իւր էրիկը Գարեգին այդ կործանիչ ախտէն ետ կեցընէ. վարձեալ զո՛ւր տեղ. որիչ բան չշահեցաւ՝ բայց եթէ իւր մահը այո՛, անգամ մը այնչափ յանդիմանեց, այնչափ հակառակ խօսեցաւ՝ որ Գարեգին բարկացաւ, և խենթի պէս վրան վազելով քաղեց մոզերէն, ոտքի առկ թաւաւ, և այնքան աքացի սրտին զարկաւ՝ որ այնտեղ պիտի սպանէր, եթէ Յարօն ու ես ու մօրքուրս փրայ

չհասնէինք չազատէինք. Բայց ինչ օգուտ. խեղճ Անուշիկը սրտին ցաւէն ու կերած ծեծէն՝ երեք ամիս անկողին մնալով՝ մեռաւ. դեռ տարի ու կէս չկար որ ամուսնացեր էր, և որք թողուց փոքրիկ Միհրանիկը, որ որդիքների ամենադժբախտն է՝ այդպիսի հայր մ'ունենալով. Գէթ այս դէպքէն վերջը խելքը ժողուէր. քիչ մ'աւտն կարծես վշտացաւ, սարսեցաւ, և ուզեց դարձեալ կարգուիլ. բայց այնքան ծանօթ էր իւր խաղափոխութիւնն և Անուշիկի մահուան դէպքը, որ ամբողջ Ռոստովի մէջ չգտնուեցաւ քրիստոնեայ մը որ իրեն աղջիկ տար. ինքն ալ ծնողացս կամքին դէմ՝ գնաց հրեայի մը վատ անունով աղջիկ մ'առաւ Ժուզ Բերաւ, որ տանուհինգ օրէն վերջը թողուց զինքն ու փախաւ անհետացաւ, հետն ալ շատ մը դրամ և զանազան թանկագին իրեղէններ տանելով տունէն... Այն օրէն ի վեր Գարեգին ալ ինքզինքը յուսահատութեան զարկած է. շարքիներով տուն չի դառնար. ասդիէն անդիէն փոխ գրամ կ'ունէ խաղի կու տայ. մայրերնիս քանի որ ողջ էր՝ վարձեալ մէկ քիչ կը ջանար ծածկել ըրածները, բայց հիմա ամենուն յայտնի կը զօրծէ. խօսք մը չի կրնար լսել, մէկէն կը բարկանայ և կը հայնոյէ... Ո՛հ, կը մտածեմ վերջին անգամ մ'այլ հետք խօսիմ, և թէ որ չկարենամ օգուտ ունենալ՝ թողում հեռանամ ես ալ հօրս քով, հեռանամ այս անէն՝ որ Գրչափ պատիւ ունէր առաջ՝ այնչափ ալ հիմա անպատիւ եղած է, անտանելի եղած է, դժոխք վարձեր է...

ՏԵՍԻՆ ԶՈՐՐՈՐԻ

Սմբատ և Յարօ

Յարօ. — Պարօն Սմբատ, անաւատիկ Գարեգինը տուն կու գայ իւր բարեկամներով։
Սմբատ. — (Դժբախտ. — Ամբողջ զինքը խաղալով խմելով պիտի անցընեն). — Յարօ, իմացուր մօրքոյն որ անկողինս պատրաստել տայ, կ'ուզեմ կանուխ քնանալ որ վաղը շուտով Ազովսքի բանկին հաշիւները

պիտի տեսնենք, դիրեկտորն ինծի պիտի սպասէ, չեմ կարող մնալ...

ՏԵՍԻՆ, ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գարեգին, Սմբատ, Սեպուհ, Ներսէս Աշոտ, Տիրան, Հրահատ, Յարո

Սեպուհ. — Բարի իրիկուն, պարոն Սմբատ, Բնչպէս ես (ձեռք բորոնելով). առ խուր կ'երեխա:

Սմբատ. — Բարի եկած ես, սիրելի Սեպուհ, շնորհակալ եմ, ուրախ եմ զքեզ տեսնելուս:

Ներսէս. — Աշոտ, Տիրան, Հրահատ (կարգաւ Սմբատի ձեռքը կը սեղմեն՝ շոտ):

Սմբատ. — (Գարեգինի ձեռքը սեղմելով) Բարի եկած ես, եղբայր:

Գարեգին. — Այս իրիկուն կանուխ առն գարձեր ես, Սմբատ, կ'երեխ բանկին արձակուրդի օր է:

Սմբատ. — Այո, եղբայր իմ, տարւոյն վերջին օրերն ըլլալով առաւօտունէ մինչև երեկոյ հաշուի զբաղած ենք այս երեք օր է. այս իրիկուն սովորականէն քիչ մը կանուխ արձակուրդ ունեցանք. վաղը դարձեալ շուտով պէտք է գնամ. այս պատճառաւ կը փափայեմ կանուխ պառկել. ուստի ներեցէք ինձ որ ձեզ բարի զուարճութիւն ու նաև բարի գիշեր մաղթեմ:

Խաղակիցք. — Ո՛հ, անկարելի բան, անկարելի բան (առչելք առնելով):

Սեպուհ. — Ո՛հ, պարոն Սմբատ, միթէ կարելի է ամենուր փափաքն արհաւարհես ու մեզի հետ ընկերութիւն չընես, մանաւանդ որ ձմեռ իրիկուն է՝ երկայն է, քնանալու ժամանակ շատ կայ. խնդրեմ կեցիք մեզի հետ և քիչ ժամանակէն արի մեզի հետ լիվատիս պարտէզը շրջելու զբոսնելու:

Սմբատ. — Ծնորհակալ եմ, Սեպուհ, ձեր և ընկերութեան ազնուութեան. քանի որ միտք ունիք լիվատիս գնալու՝ ես միայն այստեղ ձեզի հետ կը մնամ և յետոյ ձեզ բարի զուարճութիւն կը մաղթեմ, նեղուած եմ, չեմ կարող ընկերել ձեզ լիվատիս պարտէզը գնալու:

Խաղակիցք. — Հատ լաւ, շատ լաւ. կեցցէ Պարոն Սմբատ:

Գարեգին. — Սիրելի բարեկամք, հրաւեցէք ուրեմն մենք մեր քանի մը պարտիան խաղանք, մինչև որ Յարոն մեզի առջը գինին հասցընէ: Յարո, շուտ ըրէ (կը խաղան):

Յարո. — Պատրաստ եմ, տէր. աչք բանալ գոցելու մէջ կը հասցընեմ (կ'երբայ և շուտով կը բերէ գինի). պարոններ, հրամեցէք, նոր բացուած կարասնէն է, հրաւեցէք:

Սեպուհ. — Ձեր կենացը, բարեկամք (կը խմէ)... Գինի չէ, նեկտար է, այնքան քաղցր է:

Խաղակիցք. — Անուշներ, պարոն Սեպուհ... (Խաղակիցք կը խմեն):

Գարեգին. — Պարոններ, դարձեալ կը դնեմ. առաջին կորուստը տաւր մանէթ՝ վարպետին է. աշակերտը վերջը կը կորսընցընէ. դենք ամէն մէկերնիս քսանդինգական մանէթ:

Խաղակիցք. Պարոն Սեպուհ, պարոն Սմբատ, դուք չէք ուզեր խաղալ:

Սմբատ. — Ներեցէք, բարեկամք, բընաւ խաղացած չեմ, չեմ գիտեր խաղալ:

Սեպուհ. — Ես ալ պարոն Սմբատի հետ պիտի խօսակցիմ. խնդրեցինք որ մեզի ընկերութիւն ընէ. զինքը մինակ ձգելը լաւ բան չէ. ուրիշ անգամ կը խաղամ:

Գարեգին. — Տուէք, տուէք, խաղն իմն է. հարիւր մանէթ վատաւ. քիչ չէ. դենք յիսունական մանէթ:

Խաղակիցք. — Չգնողին տունն աւեր... դենք: — (կը խմեն):

Ներսէս. — Չարմախիք բան՝ որ պարոն Սմբատ խաղալ չ'իմանար. աշխարհիս մէջ չի ապրի...

Գարեգին. — Է՛հ, Բնչ գարմանք. ծընողքնիս զինքը առաջին օրէն աբեղայ ծներ են. կարծեմ վերջը վերջը վարպետ պիտի ըլլայ. հիմակաւնէ փոքր կ'ընէ իր անձին:

Տիրան. — Է՛հ, պարոն Գարեգին, ինչո՞ւ կը մեղադրէք ու կը նախատէք պարոն Սմբատը. ամէն մարդ իւր ազատութեան տէրն է. խաղացողն ալ, չխաղացողն ալ.

մենք իրաւունք ունինք խաղալու, ինքն ալ չխաղալու:

Սմբատ. — Ներեցէք, պարոն. Գարեգինի խօսքերն ինձ նախատինք չեն բերեր, այլ կը հաստատեն՝ որ ասուգիւ խաղալ չեմ գիտեր և չեմ ալ սիրեր. բայց թէ ինչ աստիճան դուք խաղալու իրաւունք ունիք՝ այդ բանը քննութեան ու մեկնութեան կարօտ է:

Գարեգին. — Ո՛ր, ո՛ր, դարձեալ սկսար ձանձրաւալի. քարոզներդ, անվերջ մեծ պարբի չափ երկրորդ վարդապետութիւններդ... Բարեկամք, որմէն ձեռքն է բախտի թուղթը այս անգամ:

Հրաճաւտ. — Իմ ձեռքս է, իմս, պարոն Գարեգին. կեցցէ՛, բախտս. այս անգամ կորսընցուցիր. երկու հարիւր մանկէթ շահս.

Գարեգին. — Փոյթ չէ՛. գնենք յիսու նական ալ. Սմբատին անէծքն ինձ հասաւ... (կը խմեն):

Ալուտ. — Յիսունականէն ինչ շահ կ'ելլէ. գնենք հարիւրական. չգնողին տունն աւեր...

Խաղալիքք. — Դնենք. չգնողին սեւ առեալ...

Գարեգին. — Իմ արեւ. միշտ պայծառ է. գնենք. միայն թէ դարձեալ Սմբատին լուսնին տուր զիս չծածկէ:

Սեպուհ. — Պարոն Գարեգին, դուք զուր տեղ մեր ընկերութիւնը կ'ուզէք խռովել՝ նախատական խօսքեր ուղղելով Սմբատին...

Ալուտ. — Տուէք, բախտն իմն է... չորս հարիւր մանկէթ շահ...

Գարեգին. — Ա՛յ չեմ խաղար. Սմբատին անէծքն հասաւ բախտին. երթանք Լիվաթիս և այնտեղ շարունակենք:

Խաղալիքք. — Երթանք (տաք կ'ելլեն և մի առ մի կը բարեկեն զՍմբատ՝ քացի Գարեգինէ, կը սեկեկեն. կը մնան Սեպուհ և Սմբատ միայն): Մնաք բարով, պարոն Սմբատ:

Սմբատ. — Երթաք բարով, բարի գոտեմութիւն... կը փափաքեմ որ եղբօրս տրեւ միշտ պայծառ փայլի:

ՏԵՍԻՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Սմբատ և Սեպուհ

Սմբատ. — Դուք ալ չէք գնար, պարոն Սեպուհ:

Սեպուհ. — Եւ միթէ այդ հարցը պէտք է ինձ ընես, իմ սիրելի Սմբատ. միթէ զիս նոր կը ճանաչես. միթէ ժանօթ չէ՞ քեզի իմ սէրս, ուխտս և մտածութիւնս:

Սմբատ. — Գիտեմ, սիրելի իմ Սեպուհ, գիտեմ քու բարձր և վսեմ մտածութիւնդ, որով իրեւ նշմարիտ բարեկամ՝ երգուեր ես իմ և քո արեւուն և մեր ծնողաց զխոյն վրայ՝ որ ամէն ջանք, ամէն հնարք բանեցընես՝ Գարեգինը ետ կեցընելու իր բռնած վատ ճանապարհէն: Սրտանց կ'ատես դուն խաղալը՝ ինչպէս կը զզուի մարդս թու նաւոր օձէ մը. բայց պահպան հրեշտակի մը պէս դուն ալ Գարեգինի և նորա մոլորութեան ընկերաց հետ կը շրջիս՝ որ կարելի եղածին չափ բարի ազդեցութիւն ընելով՝ քիչ քիչ...

Սեպուհ. — Զուր տեղ, սիրելի Սմբատ, զիս գովելով՝ քու լաւութիւններդ ծածկել կ'ուզես. ես ինչ որ կ'ընեմ՝ քու օրինակիդ հետեւելով կ'ընեմ. մենք միասին զպրոցի ընկեր եղած ենք սիրով, ուխտեր ենք սիրով իրարմէ չբաժնուիլ բարեկամութեան անքաւ կելի կապով, բայց եթէ մահաւամբ. ուստի հիմա պէտք է գործենք միասին՝ չարեաց առջէն առնելու համար... յիշէ, Սմբատ, որ Սեպուհ կեանքն ու արիւնն ալ երդուեց քեզի և քեզի համար... ուստի մնաս բարով, սիրելի Սմբատ, մնաս բարով, գիշեր բարի... կ'երթամ Գարեգինը գտնելու, պիտի չթողում որ այս գիշեր ծանր ծանր կորուստներ ընէ...

Սմբատ. — Աստուած օգնական ըլլայ քու բարի կամացդ... դարձեալ բարով տես. նուիրեմ, սիրելի Սեպուհ, երթանք բարով (ձեռք կը բօրանեն սիրով և կը սեկեկեն Սեպուհ):

ՏԵՍԻԼ ԵՕՔՆԵՐՈՐԴ

Մմբատ և ապա Գարեգին

Մմբատ. — Ազնիւ սիրտ, սքանչելի հոգի, բարձր Սեպուհ, երանի թէ... (կը մտնէ Գարեգին) Ո՛հ, եղբայր. Բնչպէս, լիւստիւս չգնացիք... տո՛ւն կը դառնաս...

Գարեգին. — Հետո փող վերցըրելու մոռցեր եմ, Մմբատ. ճամբէն դարձայ որ առնեմ... յոյս ունիմ այս գիշեր քանի մ'օրուան կորսընցուցածներս բոլորը վատարկիմ... Բայց զուն տեղիք ես, երեսդ կախիմ ես... յըլլայ թէ քանի մը կատակի խօսքեր որ բո՛խ անոր համար...

Մմբատ. — Գարեգին, դու իմ մեծ եղբայրս ես, և ես քու փոքր եղբայրդ. և պէտք է որ ես զքեզ սիրեմ և զուն ալ զիս սիրեմ թէ չէ:

Գարեգին. — Ի հարկէ, այդպէս է, պէտք է. և յուսամ որ զուն զիս չեմ ասեր, ես ալ զքեզ կը սիրեմ, կարծեմ բաւական է:

Մմբատ. — Ես զքեզ այդ սիրոյն վրայ կ'երկոյնցընեմ, Գարեգին, խնայէ մեր ընտանեաց, խնայէ հօրս, խնայէ քեզի, խնայէ քու մէկ հատիկ զաւակիդ Միհրանիկին, խնայէ նաեւ ինձի. ոտքերուդ կը պըլլուիմ, անխժած խաղալէդ ետ կեցիր, գէթ քիչցուր խաղալը, գէթ հարկընքուր վրայ, հազարնե, բու վրայ մի խաղար. տես ժօր է առաջուան մեր ունեցած հարստութիւնը. հագիւ կրնանք մեր պատիւը պահելով ապրիլ, կ'ուզեմ ուրեմն որ դուն դուռ ինկնանք մուտանք...

Գարեգին. — Չէ, -չէ, վեր ելիր, վեր ելիր, խնդ՛ն եղբայրս, զուն զքեզ այդ տեսակ մտածմունքներով մի հալեր մահեր. Գարեգինի արեւը չմոնէ, այդ օրերուն չենք հասնիր: Թէ որ ես կը խաղամ՝ հօրս ստաշուածներուն վրայ չէ որ կը խաղամ, այլ խաղէն վատարկածս դրամապուս կ'ընեմ խաղալու...

Մմբատ. — Խաղէ՛ն վատարկածով... ահ, եղբայր, գէթ սուտ մի գուրցեր, մի շահար խաբէլ այնպիսի մէկը՝ որուն յայտնի է թէ հօրերնուս կալուածներուն ամէն մէկ

կտորը մը հրէին, որ ուսին, մը յոյնին մօտը գրաւ ես զրեր, և փող առեր վատներ ես. մնացեր է միայն այս տունը, այն ալ խմացեր եմ որ գրաւի գնելու ետեւ ես... մտածէ ուսկից պիտի հատուցանես այդչափ պարտքերդ. մտածէ որ եթէ տունն ալ գրաւի գնես՝ պարտատէրը ժամանակը լրացած աւտենին՝ տէրութեան ձեռքով, օրէնքի իրաւունքով՝ զմեզ անտուն անտէր փողոցի մէջ կը թողու՝ տններնէս դուրս հանելով... Գիտեմ մի մը որ միշտի զարհուրելի գումար պէտք է այս օրերս հատուցանես Ջհուս Պապա վաշխառուն...:

Գարեգին. — (Մտածուկ. — Արդեօք Յարժն մատներ է զիս. չէ, չէ կարելի...): Մմբատ, բաւական է. կը տեսնեմ որ շատախօս մարդիկ՝ իրենց շահերուն համար՝ քեզի այդպիսի սուտ լուրեր հաղորդեր են...

Մմբատ. — Սուտ լուրեր, եղբայր, սուտ լուրեր. էհ, երանի թէ սուտ ըլլային... բայց Բնչ օգուտ որ նաեւ գէմքիդ կաս կարմիր դառնալն, երեսիդ և զունիդ ունեցած ալլայլուծիւնն ալ կը մատենն զքեզ՝ որ սուտը պուն կ'ըսես... Մմբատը շատ և շատ խոր թափանցել է այդ քաղաքիքներուն. մէկ բան միայն ինձի անծանօթ է, զքեզ մը լորցընող գլխաւոր սատանան գտնել...

Գարեգին. — Դուն ես, Մմբատ, այդ սատանան, որ լրտեսութիւններովդ ուրիշին գործերուն կը խառնուես. դուն Բնչ իրաւունք ունիս իմ վարքս ու գործերս քննելու...

Մմբատ. — Ի՞նչ իրաւունք, Բնչ իրաւունքով կը խառնուիմ քու գործերուդ և մեր տանը գործերուն... Այն իրաւունքով՝ որ ես և դու մի և նոյն հօր եւ մօր զաւակներ ենք, որ ես եղբայրդ եւ ես պէտք է զքեզ սիրեմ, քու բարիքդ ուզեմ, և ոչ միայն քու, այլ նաեւ քու մէկ հասակ զաւակիդ Միհրանիկին բարիքն, որ իմ արիւնս է, որ իմ սրտիս կտորն է...

Գարեգին. — Իմ զաւակիս հոգն ինձի թող, Մմբատ. քանի որ իր հայրն՝ ողջ է՝ քեզի կարօտութիւն չունի: Իսկ տան հոգն ալ ինձի կ'էլնայ, եր եմ հօրս անդրանիկն. իսկ քեզի՝ միայն հնազանդիլ ու բռն կ'էլնայ:

ՄԱՐԱՄԱՆ. — Շատ կը սխալուիս, Գա-
րեգին, շատ կը խաբուիս. եթէ դուն քու
պատուոյդ վրայ հող չես ընե՛ր, եթէ զուն
հօրերնուս և մեր բնասանաց բարի անուան
և ստացուածքներուն փոյթ՝ չես ընե՛ր, իմ
իրաւունքս է բողոքելու և բնաւ չլուլու. բո-
ղոքելու նախ քու խղճիդ առջև, բարեկամաց
առջև, Աստուծոյ առջև, և եթէ հարկ լինի
նաև դատաւորաց առջև, քանի որ հայրեր-
նիս զմեզ իրարմէ չէ բաժնած...

ԳԱՐԵԳԻՆ. — Ո՛հ, ո՛հ, շատ առաջ
մի երթար, շատ շուտով մի վազիր, ՄԱՐԱՄԱՆ...
այո՛, բողոքէ որչափ կ'ուզես իմ խղճիս վէժ.
Իմ խիղճս արդէն վարժե՛ր է շատ տարիներէ
'ի վեր՝ այդ տեսակ յիմար բողոքներուն ա-
կանջ չկախելու. Այ՛, բողոքէ որչափ կ'ու-
զես բարեկամաց առջև. ես այնքան տխմար
չեմ՝ որ ուրիշներուն ներեմ իմ ազատ գոր-
ծերուս խառնուելու. Այ՛, բողոքէ նաև Աս-
տուծոյ առջև, և ե՛րբ որ Աստուած քու բո-
ղոքիդ լսէ, արի ինծի իմաց տուր: Իսկ բո-
ղոքիլ գտաւտարաց... քանի որ հայրենիս
ողջ է՝ դուն իրաւունք չունիս. իսկ հայրեր-
նիս մեռնելէն վերջն ալ՝ քանի որ զեռ ի-
րաւունքի տարիքդ չես լցացուցած՝ ես ինքս
եմ քու խնամակալդ, և օրէնքն ինծի իրա-
ւունք կու տայ՝ ինչպէս ուզեմ՝ այնպէս կար-
գադրելու իմ և քու ժառանգութիւնդ: Այս
գիտնալէն վերջը՝ հիմա զնա բողոքէ ո՛ւմ որ
ուզես, ո՛ւր որ ուզես, որչափ որ ուզես...

ՄԱՐԱՄԱՆ. — Անդգամ, ուրեմն դուն Աս-
տուծոյ տրդաբութիւնն ալ, մարդկային իրա-
ւունքն ալ քու անարդ անխտրուդ կը գործո՛ր,
առանց վարկաւոր որ հիմա երկնքէն կայծակ
մ'իջնայ և զքեզ ոչընչացընէ... կը տեսնեմ,
Գարեգին, որ դուն չարութեան ծայրն հասեր
ես, և հետեւաբար կ'իմանամ որ կորուսող
մօտ է. և, ախ, երանի՛ թէ Աստուած
կեանքս վերցընէ՛ր՝ զեռ քու թշուառ վախ-
ճանդ չտեսած... Բայց ես ընելիքս որոշե՛ր
եմ. վերջին խօսք մ'ալ ըսել քեզի պարտքս
համարեցայ՝ իբրև եղբայր, և այնուհետև զիս
իբն եղբայր չճանչցողէն զաստուիլ հեռա-
նալ խեղճ հօրս պէս...

ԳԱՐԵԳԻՆ. — Ես զքեզ չէ թէ եղ-
բայր՝ այլ թշնամի կը համարեմ, և հեռա-

նալզ զիս մեծ. ձանձրութենէ մը կ'ազատէ,
Գնա ընկերութիւն րբէ վանքերու մէջ արեւ-
դաներու, վարդապետներու, ուր տեղ քեզի
պէս սուրբ սխտոր կեցծաւոր կրօնասէրներ
հարիւրաւոր կը գտնուին...

ՄԱՐԱՄԱՆ. — Անգամ, մի հայհայեր.
զԱստուած, կիօնք ու կարգաւոր՝ ծաղրի և
հայհոյանաց նիւթ ըրեր ես. զԱստուած քեզի
թշնամի ես ըրած, և ես ալ Աստուծոյ յայտնի
թշնամոյն եղբայր չեմ՝ կրնար լլլալ: Վաղը
ճանապարհի պատրաստութիւն կը տեսնեմ,
կը մեկնեմ հօրս մօտ ապրելու՝ մինչև որ
վարքդ ու բարքդ փոխես. կը թողում կը հե-
ռանամ քեզնից. Աստուած միայն զժայ քե-
զի, դարձ տայ քեզի...

ԳԱՐԵԳԻՆ. — Հա՛, այդպէս, բանն
Աստուծոյ թող, ես Աստուծոյ հետ ճամբայ
կ'երթամ. իսկ դուն զնա հեռացիր, կ'ուզես
Քաղու հօրս մօտ, կ'ուզես անպիտ աշխարհ
մօրս մօտ, երկուքին ալ անտարբեր եմ...

ՄԱՐԱՄԱՆ. — (Թաշկնապկն աւազ քրո-
նած՝ կոչ լայ. յետոյ բազմակները դէպ յնշը-
կինս) Աստուած արդարութեան, դուն տես
և գատաստան րբէ: (Կը մեկնի):

ՏԵՍԻՆ ՈՒԹԵՐՈՐԻ

ԳԱՐԵԳԻՆ. — Վարագուրին ծայրը բա-
ցուեր է. ՄԱՐԱՄԱՆ ըրածներնուս մասամբ մի
տեղեակ է. արդեօք մի է յայտնի... Յա-
րօն կարելի չէ. այնպիսի կտայ ունինք մէջեր-
նիս՝ որ կարելի չէ. իմ կործանումն ու ի-
րեն, կործանումն իրարմէ կախուած են. ոս-
րեմն ուրիշ լրտես մը կայ ընկերացս մէջը.
պիտի ջանամ իմանալ... բայց հիմա ինծի
կը սպասեն ընկերքս. փող առնեմ ու երթամ
(կը բանայ սևտոսկ մը և քսակ մը յի կը
հանէ)... Գարեգին, վերջին քսակդ է...
այս գիշեր կամ ամբողջ պիտի կործնցնեմ
և կամ լաւ պիտի վաստակիմ... երթա՛նք...
(Կը համարոյրէ քսակն ու գրպանը կը դնէ,
և միեւնջեմ կ'ուզէ մեկնիլ՝ ներս կը մտնեն):

ՏԵՍԻՆ ԽՆՆԵՐՈՐԴ

Գարեգին, Միհրանիկ և Թարօ

Գարեգին. — Ո՛հ, ի՞նչ կայ, Թարօ. ինչու եկած ես, Միհրանիկ:

Թարօ. — Պարոն Գարեգին, տեր իմ, Միհրանիկը լալով հրամայեց ինձի՝ որ գինջը քեզ մօտ բերեմ. լալէն չէր զադրեր...

Գարեգին. — Լաւ եկար, Թարօ. Թո՛ղ հիմա այստեղ Միհրանիկը, և տուն գնա շուտով այս պնդրտամուրհակս դարձեալ Զհուտ Պանային տար, ո՛ւր որ գտնես գինջը տո՛ւր, և ըսէ՛ որ 1120 մանէթ հետն առած՝ այս գինջը Լիւիստիա պարտեղը գայ զիս գտնելու անպատճառ. լաւ իմացա՛ր:

Թարօ. — Շատ լաւ, տեր իմ. անպատճառ կու գանջ Լիւիստիա քեզ կը գրտնենք (կ'եղէ):

ՏԵՍԻՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Գարեգին և Միհրանիկ

Գարեգին. (կ'ուզէ մեկնել):

Միհրանիկ. — Հայրիկ, ո՛ւր կ'եր-

թաս. Լիւիստիա կ'երթաս. ես ալ կ'ուզեմ. ինձի ալ հետդ տար...

Գարեգին. — Միհրանիկ, զու այստեղ մնացիր, ես շուտով կը գտնեմ... գինջը ցուրտ է, կը մրսիս...

Միհրանիկ. — Հայրիկ, զու՛ն չես մրսիր, ես ինչի՞ պիտի մրսիմ. ես ալ կ'ուզեմ հետդ գալ...

Գարեգին. — Ձէ, Միհրանիկս, ճամբան երկայն է, զու չես կարող գալ, ես շուտ պիտի երթամ...

Միհրանիկ. — Կարող եմ, հայրիկ. նայէ՛ ի՛նչպէս կը քալեմ (կը վազվազէ և վար կ'իյնայ լայով, մինչ դեռ Գարեգին սպասեցաւ. ձեռով մնալ կը հրամայէ և կ'անհետանայ)... Հայրիկ (չաշով), հայրիկ... չի լսեր... Թէ որ լաւ տեղ կ'երթայ հայրիկս՝ ինչի՞ ինձի ալ հետը չի տանիր... զիս չի սիրեր... Լիւիստիա լաւ պարտեղ է. Սմբատ հօրեղբայրս միշտ զիս այնտեղ կը տանի ման կ'ածէ. ինձի անուշներ կը քնէ... ո՛հ, Սմբատ հօրեղբայրս շատ լաւ է, ինձի շատ կ'ուզէ, ես ալ իրեն կ'ուզեմ... ախ, ինչի՞ Սմբատն իմ հայրս չէ... (վարագոյրը կը գոցուի):

(Շարայարեւի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ



Ներկայ տարույս Տարագի, Ապրիլ 2՝ ինչոյ տեսած, 124000 (N^o. 4) համարն կ'ընծայէ իւր ընթերցողաց հաստուածիկ մը « Մատենախօսական » վերնադրով (182. էջ), յորում « Վիեննայի (կարգա՛) վենետիկոյ.

1. Արեւք չեմ կարող հասկնալ Թէ ի՛նչ կը նշա. նախէ հայերէն լեզուաւ գրուած յօդուածի մը մէջ յանկարծ եւրոպական տառ մը գնել, գիտութեան Թէ ագիտութեան արգիւնք է այդ:

մի՛ զարմանար, lapsus calami է այդ, որոյ շարունակութիւն համարելու է անշուշտ նաեւ յօդուածի վերջին մասը, յորում վիպասանութեան վրայ կը խօսուի: Բազմաշէկ հանդիսի մէջ տրված մի ընդարձակ քննութեան » կամ քննական յօդուածի վրայ համառօտ խորհրդածութիւն մի կ'ընէ: Դոյն յօդուածն, — եթէ կարելի է այդ անունը տալ այն մէկուկէս էջ գրութեան, որուն մեծագոյն մասը կը կազմէ « քաղաածքը Բազմ.